ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.*«Դսեղցի Մեհրաբյան-Թումանյան Հովակիմի անունը քարերը սասանացնում էին… երկու տղամարդ նրա մեջքը չէին կարող խտտել, հինգ մարդ նրա մեկ ձեռը չէին կարող ոլորել… Էս Հովակիմը, էս Լոռու ձորերի աստվածը, էս սարերի արծիվը, էս մեշեքանց ասլանը մենակ հերիք էր, որ մեկ քարի քամակից ձեն տալիս՝ հարյուր թուրքի լեղին ջուր կտրի, աչքերը սևանա…»*:

(2)

- **Ո՞վ և ո՞ւմ նախապապին է այսպես բնութագրում:**

Պատասխան՝ Խ. Աբովյանը Հովհ. Թումանյանի նախապապի մասին:

2.

- **Ի՞նչ կապ կա արու թռչունի և չիբուխ ունեցողի միջև:**

(1.5)

Պատասխան՝ *Արու թռչուն՝ վարուժան , չիբուխ ունեցող՝չիպուգքյար: Դանիել Վարուժան = Դանիել Չպուգքյարյան*

3.*Եվ այդ պահին էր, որ աշխարհ եկավ՝*
Նա՝
Այր մի՝ … … անունով:

- **Ո՞ւմ մասին է խոսքը:** *(1)*

… Մենք կայինք, այո, Նրանից առաջ,

Սակայն նա ծնվեց,
Որ գա ու դառնա ինչ-որ նոր Սկիզբ:

- **Ի՞նչ «նոր Սկզբի» ծնունդ տվեց նա:** *(2.5)*

(3.5)

Պատասխան՝

- Մեսրոպ Մաշտոց
- Խոսքը հայոց գրերի ստեղծման մասին է:

4. *Հաջվարդ շապիկի բույր, արծաթե սուրմաների զրնգոց, տաք հնձան, սիմինդրի երկար տերև, աչքերը խաղողի սև հատիկներ, դեղին, երկու փետուր՝ դեղնագույն-սև պուտերով….*

- **Ո՞ր գրողի ո՞ր ստեղծագործության բանալիներն են:**

(1.5)

Պատասխան՝ *Ակսել Բակունց, «Միրհավ»*

5. Բանասեր, լեզվաբան Ստեփան Մալխասյանցը նրա մասին գրում է. *«<Նա> առաջինը եղավ, որ գրեց հայ ազգի սիստեմական պատմությունը սկզբից մինչև իր ժամանակները.... Սա մի ծննդյան վկայական էր մեր ազգի համար, որ մինչև այդ ժամանակ չգիտեր, թե ո՞վ է ինքը և ի՞նչ ծագում ունի: Կապելով հայ ազգի սկզբնավորությունը Սուրբ Գրքի հետ, ծագեցնելով հայերին Հաբեթի ցեղից՝ նա հայ ազգի համար ստեղծեց պատվավոր տեղ մյուս հին ազգերի շարքում»:*

- **Ո՞վ է նա:** *(1)*
- **Ինչպե՞ս է կոչվում աստեղծագործությունը, որի մասին հիշատակվում է:** *(1)*
- **Քանի՞ մասերից է այն բաղկացած, թվե՛ք դրանք :** *(2.5)*

(4.5)

Պատասխան՝

- *Մովսես Խորենացի,*
- *աշխատությունը՝ «Հայոց պատմություն»:*
- *Այն բաղկացած է երեք մասից, որոնք հեղինակը կոչել է գրքեր:*

1-«Հայոց մեծերի ծննդաբանությունը»
2-«Միջին պատմություն մեր նախնիների»
3-«Մեր հայրենիքի պատմության ավարտը»:

6. Նամակներից մեկում Խ. Աբովյանը գրում է, որ եթե Ասիան պիտի ստանա լուսավորության իսկական լույսը, ապա ամենից արագ և լավ դա կարող է արվել արվեստների միջոցով:

- **Որտեղի՞ց էր ուզում Աբովյանը ասիական երկրներ փոխադրել արվեստների լույսը:**

(1)

Պատասխան՝ *Եվրոպայից, որտեղ ուսանում էր:*

7. Ավետիք Իսահակյանը գրել է. «*Հայաստանում կա մի գրող, որի բառերը երգում են կոմիտասյան հանգով և փայլատակում Սարյանի կտավների բոլոր գույներով… Նա մեր արձակի ամենատաղանդավոր ներկայացուցիչն է»:*

- **Ո՞ւմ են բնութագրում իսահակյանական խոսքերը:**

(0.5)

ա/ Հրանտ Մաթևոսյան
բ/Ակսել Բակունց
գ/ Դերենիկ Դեմիրճյան
դ/ Գուրգեն Մահարի

Պատասխան՝ *բ/Ակսել Բակունց*

8.

- **Ինչպե՞ս է նկարագրում Պ. Սևակը Արարատ լեռը «Եռաձայն պատարագ » պոեմում** /բառացի մեջբերումը պարտադիր չէ/:

(2)

Պատասխան՝ **« ……**

երկու զանգ հսկա և անձեռագործ:

Եվ այնքա՛ն հսկա, այնքա՛ն վիթխարի,

որ չէին կարող որևէ կեռից ոչ մի կերպ կախվել,

ուստի, պարզապես կործված են հողին»:

9….*Ողբամ, ողբամ, հազար ողբամ զքեզ, Հայաստան,*

Երբեմն բյուր փառաց տեղիկ, հիմա դամբան,

Քո ծիրանիքն մերկացան, քո թագդ առավ,

Արիությունն հայկական ելավ թռավ,

Քո սուրբ հաջորդք քահանայիցն պակսեցան,

Ամեն չարիք մտին ի մեջ ժողովրդյան…

- **Ո՞ւմ էր ձայնակցում Ղ. Ալիշանը:** *(1.5)*
- **Որքանո՞վ է նրանց մտահոգությունը արդիական /ինքնուրույն հիմնավորում/:***(2)*

(3.5)

Պատասխան՝

- Մովսես Խորենացուն